ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ----------2023թ. **N ---- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ Հ. 89 ՇԵՆՔԻ Հ. 58/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2023 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.694-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Զ. Անդրանիկի փողոցի հ.89 շենքի հ.58/1 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) Դավիթ Վլադիմիրի Ռոստոմյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ Հ. 89 ՇԵՆՔԻ Հ. 58/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Զ. Անդրանիկի փողոց հ.89 շենքի հ.58/1 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Դավիթ Վլադիմիրի Ռոստոմյանին:

Զ. Անդրանիկի փողոցի հ. 89 շենքի հ. 58/1՝ 12. 12 քմ մակերեսով բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 29. 06. 2023թ. հ.29062023-01-0291 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

Զ. Անդրանիկի փողոցի հ. 89 շենքի հ. 58 բնակարանը (նախկին հասցեն Ա. Հովնաթանի փողոց հ. 9 շենք, բն. 58) Ժողովրդական դեպուտատների 26. 12. 1985թ. թիվ 27/21 որոշմամբ հատկացվել է Վլադիմիր Սկաուտի Ռոստոմյանին և վերջինիս ընտանիքին: Նշված որոշման հիման վրա տրվել է թիվ 132258 օրդերը: Երևանի Շահումյանի շրջանի Ժող. դատարանի 07. 01. 1987թ. հ. 2-1658 վճռով ամուսինները ամուսնալուծվել են: Դատարանի վճռով Մարինե Ռոստոմյանին և իր երեխաներին հատկացվել է նշված բնակարանի 7. 4 քմ և 19. 5 քմ մակերեսով սենյակները, իսկ Վլադիմիր Ռոստոմյանին 11. 5 քմ մակերեով սենյակը, կոմունալ և օժանդակ հարմարությունները թողնվել է կողմերի ընդհանուր համատեղ օգտագործմանը:

Հետագայում Մարինե Ռոստոմյանը իրեն հատկացված սենյակները սեփականաշնորհել է իր և իր երեխաների անվամբ: Մարինե Ռոստոմյանի մահից հետո վերջինիս մասնեբաժինը ժառանգության իրավունքով փոխանցվել է նրա երեխաներին:

25. 02. 2022թ. ԵԴ/41902/02/21 քաղաքացիական գործով կայացած վճռի համաձայն առանց փոխհատուցմամբ դադարեցվել է Վլադիմիր Սկաուտի Ռոստոմյանի բնակելի տարածության օգտագործման իրավունքը՝ իրեն հատկացված, չսեփականաշնորհված սենյակի նկատմամբ:

Երևանի քաղաքապետի 12. 06. 2023թ. հ. 1524-Ա որոշմամբ չսեփականաշնորհված 1 սենյակին տրվել է նոր հասցե՝ Զ. Անդրանիկի փողոց 89 շենք բն. 58/1:

Ըստ «Սեբաստիա-2» համատիրության կողմից տրված տեղեկանքի՝ Դավիթ Ռոստոմյանը (նաև Մարինե Ռոստոմյանը մինչև մահը) 30 տարուց ավելի բնակվում է քննարկվող բնակարանում, ամբողջությամբ տիրապետում է այն, այդ թվում նաև չսեփականաշնորհված սենյակը: Բնակարանի սպասարկման և կոմունալ վճարները կատարվել և կատարվում է Դավիթ Ռոստոմյանի կողմից (հիմք «Սեբաստիա-2» համատիրության 26. 08. 2022թ. հ. 484 գրությունը):

Ըստ անձնագրերի և վիզաների վարչության Մալաթիայի բաժանմունքի կողմից ներկայացված տեղեկանքի, Դավիթ Վլադիմիրի Ռոստոմյանը 2002թ. հաշվառված է Զ. Անդրանիկի փողոց հ. 89 շենք հ. 58 բնակարանի հասցեում:

ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ տարածքում քաղաքացի Դավիթ Վլադիմիրի Ռոստոմյանի անվամբ ք. Երևան, Զ. Անդրանիկի փողոց 89 շենքի 58 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք՝ 2/3 բաժնեմասով, իսկ վերջին հինգ տարիների ընթացքում վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում կնքված անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ.694-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ. 694-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ Հ. 89 ՇԵՆՔԻ Հ. 58/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Զ. Անդրանիկի փողոցի հ.89 շենքի հ.58/1 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ Հ. 89 ՇԵՆՔԻ Հ. 58/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Զ. Անդրանիկի փողոցի հ.89 շենքի հ.58/1 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ